ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/26

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/1» ծածկագրով գնանշման հարցում, իրային միջոցների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1191-2021 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ.-ի թիվ ՊՆ//315-2021 գրության հիման վրա, 01.02.2021թ.-ին «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 01.02.2021թ.-ին:

01.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/26 համարի ծածկագիրը:

10.02.2021թ.-ին, 19.02.2021թ.-ին և 26.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.02.2021թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.01.2021թ.-ի թիվ ՊՆ//315-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի լուծել է՝

1. «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ-ի հետ 12.06.2020թ. կնքված N ԳՀԾՁԲ-20-7/16-1 ծածկագրով պայմանագիրը,

2. «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ-ի հետ 23.10.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/1-3 ծածկագրով պայմանագիրը և կից 09.04.2020թ. կնքված N 1 Համաձայնագիրը,

3. «Մանակ» ՍՊԸ-ի հետ 15.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/53-2 ծածկագրով պայմանագրը և կից 30.11.2020թ. կնքված N 1 փոփոխությունը,

4. «Վանգակ» ՍՊԸ-ի հետ 15.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/53-5 ծածկագրով պայմանագրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» ծածկագրով կնքված պայմանագրի շրջանակներում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.02.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1191-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 25.02.2021թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/26 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ՀՀ պաշտպանության նախարարության 06.10.2020թ. թիվ ՆՏԱ/4804 գրության համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին տեղեկացվել է, որ ՀՀ ՊՆ-ի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում անհրաժեշտ է արտադրողականության ամբողջ ծավալով կազմակերպել «կոոսպյում բամբակյա կեպիով» և (կամ) «կոոսպյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրությունը և ամենօրյա ռեժիմով

մատակարարում՝ նախապատվությունը տալով «կոոպտյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակի արտադրությանը:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ամենօրյա ռեժիմով մատակարարել է ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև կնքված ԲՄԾՁԲ-7/5-6 ծածկագրով գնման առարկա հանդիսացող «կոոպտյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակը (ինչը ապացուցվում է համապատասխան հարկային հաշիվներով և վճարման հանձնարարգրերով):

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարա¬րությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար (ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/1-3 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) լուծելու հիմքով):

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ-ցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական դատվարության օրենքսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանգրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ ՊՆ-ի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/1-3 պայմանագրի 6-րդ կետը սահմանում է հետևյալը. <Սույն պայմանգրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերովպարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությոսւնից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել...:>

Պայմանագրի շրջանակներում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր 12390 հատ բարձերեսներ /բարձի երես՝ բամբակյա/ ապրանքատեսակը, որից չի մատակարարել 3390 հատ, ինչում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի մեղքը բացակայում է, քանի որ ՀՀ-ում և ամբողջ աշխարհում լայնորեն տարածվել էր կորոնավիրուսի համաճարակը, իսկ սեպտեմբերի 27-ից նաև պատերազմական իրավիճակը, որոնք հանդիսանում են անհաղթահարելի ուժ (ֆորս-մաժոր):

Նշենք, որ նախ կորոնավիրուսային համաճարակը (ներկայացվում է մի շարք աշխատակիցների կորոնավիրուսով վարակված լինելու վերաբերյալ բժշկական փաստաթղթերը) խիստ բացասաբար է անդրադարձել հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք մեր կողմից գնվում և ներկրվում են առավելապես արտասահմանից: Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները:

Այդ դժվարություններին ավելացավ նաև 2020թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմը Հայաստանի նկատմամբ: Պատերազմի ամբողջ ընթացքում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն իրականացրել է միմիայն պաշտպանության նախարարության պատվերները և նշված անհաղթահարելի ուժի պատճառով խախտվել է Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետները:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Ընկերությունը գտնում է, որ վերջինիս դրսևորված վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորությանը, քանի որ Ընկերությունը ՀՀ-ում ստեղծված իրավիճակում, այն է՝ Covid-19 համավարակի արդյունքում ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության և դրա հետևանքով կիրառված սահմանափակումների, ինչպես նաև ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու հետևանքով, օբյեկտիվորեն զրկված է եղել պայմանագրով նախատեսված պարտավորության կատարումից:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/26 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.10.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանվել է գնման առարկայի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ գնման առարկա է հանդիսանում 19 390 հատ բարձերեսները, որոնց մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ.-ին համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում:

iii. Պատվիրատուի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 09.04.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

iv. Համաձայնագրի թիվ 1 հավելվածի «գնման-ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 7000 հատ ապրանքի համար 2-րդ եռամսյակ, իսկ 12390 հատ ապրանքի համար՝ 3-րդ եռամսյակ:

v. ՀՀ պաշտպանության նախարարության և Մասնակցի միջև 30.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխությունը (այսուհետ նաև՝ Փոփոխություն):

vi. Փոփոխության թիվ 1 հավելվածի «գնման-ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 7000 հատ ապրանքի համար հուլիսի 30-ը, իսկ 12390 հատ ապրանքի համար՝ 3-րդ եռամսյակ:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 25.01.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.01.2020թ.-ի թիվ ՆՏԱ/191 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.10.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» գնման պայմանագրի և դրան կից՝ 09.04.2020թ.-ին կնքված թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր 12 390 հատ բարձերեսներ ապրանքատեսակ, որը չի մատակարարել 3390 հատ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.-ի հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

viii. ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության կողմից 06.10.2020թ.-ի թիվ ՆՏԱ/4804 գրության համաձայն՝ Պատվիրատուն դիմել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին և մի շարք այլ կազմակերպություններին և հայտնել է, որ հաշվի առնելով ներկայիս պատերազմանակ իրավիճակը, անհրաժեշտ է կազակերպությունների և Պատվիրատուի միջև կնքված պայմանագրի/երի շրջանակներում՝ արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարում՝ նախապատվությունը տալով «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրությանը և արտադրել 52-ից բարձր չափսերով:

ix. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ.-ին կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-6» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 01.06.2020թ.-ին կնքված թիվ 3 համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի և Մասնակցի միջև 03.10.2020թ.-ին, 05.10.2020թ.-ին, 06.10.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին, 09.10.2020թ.-ին, 10.10.2020թ.-ին, 11.10.2020թ.-ին, 12.10.2020թ.-ին,

14.10.2020թ.-ին, 15.10.2020թ.-ին, 17.10.2020թ.-ին, 18.10.2020թ.-ին և 21.10.2020թ.-ին համապատասխանաբար կնքվել են պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման արձանագրություններ, որոնց համաձայն՝ մատակարարվել են «կոստյում բամբակյա կեպիով» ապրանքատեսակից 830 հատ և «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակից 1520 հատ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1191-2021 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, գնորդն իրավունք ունի՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր

մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ

կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.10.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր թիվ 1 հավելվածով սահմանվել է գնման առարկայի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ գնման առարկա է հանդիսանում 19 390 հատ բարձերեսները, որոնց մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ.-ին համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 09.04.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը թիվ 1 հավելվածի «գնման-ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 7000 հատ ապրանքի համար 2-րդ եռամսյակ, իսկ 12390 հատ ապրանքի համար՝ 3-րդ եռամսյակ: ՀՀ պաշտպանության նախարարության և Մասնակցի միջև 30.06.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության թիվ 1 հավելվածի «գնման-

ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 7000 հատ ապրանքի համար հուլիսի 30-ը, իսկ 12390 հատ ապրանքի համար՝ 3-րդ եռամսյակ:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 25.01.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.01.2020թ.-ի թիվ ՆՏԱ/191 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.01.2019թ.-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-20-7/1-3 գնման պայմանագրի և դրան կից՝ 09.04.2020թ.-ին կնքված թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր 12 390 հատ բարձերեսներ ապրանքատեսակ, որը չի մատակարարել 3390 հատ: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.-ի հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության կողմից 06.10.2020թ.-ի թիվ ՆՏԱ/4804 գրության համաձայն՝ Պատվիրատուն դիմել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի և մի շարք այլ կազմակերպությունների և հայտնել է, որ հաշվի առնելով ներկայիս պատերազմանակ իրավիճակը, անհրաժեշտ է կազակերպությունների և Պատվիրատուի միջև կնքված պայմանագրի/երի շրջանակներում՝ արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարում՝ նախապատվությունը տալով «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրությանը և արտադրել 52-ից բարձր չափսերով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ.-ին կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-6» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 01.06.2020թ.-ին կնքված թիվ 3 համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի և Մասնակցի միջև 03.10.2020թ.-ին, 05.10.2020թ.-ին, 06.10.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին, 09.10.2020թ.-ին, 10.10.2020թ.-ին, 11.10.2020թ.-ին, 12.10.2020թ.-ին, 14.10.2020թ.-ին, 15.10.2020թ.-ին, 17.10.2020թ.-ին, 18.10.2020թ.-ին և 21.10.2020թ.-ին համապատասխանաբար կնքվել են պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման արձանագրություններ, որոնց համաձայն՝

մատակարարվել են «կոստյում բամբակյա կեպիով» ապրանքատեսակից 830 հատ և «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակից 1520 հատ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ, տվյալ դեպքում, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 23.10.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր շրջանակներում պետք է 2-րդ և 3-րդ եռամսյակներում մատակարավեր 19 390 հատ բարձերեսները, սակայն պատերազմական իրավիճակով պայմանավորված, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության 06.10.2020թ.-ի թիվ ՆՏԱ/4804 գրությունը, Մասնակիցն իր արտադրողական ամբողջ ծավալով 03.10.2020թ.-ից 21.10.2020թ.-ը կազմակերպել է «կոստյում բամբակյա կեպիով» և «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարում, ինչով պայմանվորված, իրենից անկախ հանգամանքներով պայմանավորված, չի կատարել Պայմանագրով նախատեսված 19 390 հատ բարձերեսներ ապրանքատեսակից ընդամենը 3390 հատի մատակարարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (ՀՀ պաշտպանության

նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության կողմից 06.10.2020թ.-ի թիվ ՆՏԱ/4804 գրությամբ պատերազմանակ իրավիճակից ելնելով «կոստյում բամբակյա կեպիով» և «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարման պահանջով պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1191-2021 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/26 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**